Ահա այդ կանաչազարդ լեռնաշղթաներից մէկի փէշին, ընդարձակ մի տարածութեան վրայ փռուած է Հալաքնակ Քրդերը, որն արևելեան կողմից զարդարուած է ուռենիների և բարդիների տնկարաններով, պտղատու ծառազարդ այգիներով. խմելու ջուրը քարիզի է։ Տները ցեխաշէն են և մի յարկանի, փողոցները նեղ ու անկանոն, ուր ամեն տեղ կուտակուած են անասունների աղբերը։

Հողը պատկանում է Մօրադ-Միրզին. գիւղացիք հողազուրկ են. նրանք մշակում են ուզայի հողերը, բայց սերմն ամբողջապէս տալիս է ագան և նա վերցնում է բերքի $^2/_5$ մասը, բացի այդ՝ 150 թուման էլ պետական հարկ են վճարում։ Գիւղն ունի Ս. Յովհաննէս եկեղեցին, որ այժմ աւերակ է, իսկ դպրոցի կեանքը միշտ էլ եղել է խախուտ և երերուն։

Քրդերն առաջ եղել է բազմամարդ և ծաղկած մի գիւղ, բայց սիստեմատիք հարստահարութիւնները և աւազակային կազմակերպուած արշաւանքներն ու նրանց ալան-թալանը գիւղը տնտեսապէս քայքայել և ազգաբնակչութեանը հասցրել է ծայրայեղ թշուառութեան։ Նրա աշխարհագրական դիրքը, քարձր սարերն ապաստանատեղ է աւազակների, որոնք ամեն կերպ և ամեն դէպքում կեղեքում, հարստահարում են խեղճ գիւղացիութեան։ Թէ ինչպիսի հսկայ չափերի է հասած այստեղի գիւղացիութեան թշուառութիւնը, այդ մասին Քեզ որոշ գաղափար տալու համար բաւական է միայն պատկերացնել Քրդերի աւերածութիւնը։

Այսպէս, 1918 թ. Ռէզա-խան մեծ աւազակապետն իր զինուած ձիաւոր խմբով ցած գալով սարից առնում է 300 թուման փող, ապա վեց օր յետոյ 100 թուման։ Այնուհետև Յունուար 6-ին, Ծննդեան օրը մտնելով գիւղ ամբողջապէս հարստահարում է և ենթարկում անասելի կողոպուտի, այրում է եկեղեցին* ու դպրոցը և գրեթէ գիւղը քարուքանդ անում։ Խեղճ գիւղացիները մատնուած ծայրայեղ թշուառու-

* Նախքան եկեղեցին այրելը, աւազակները բարձրանում են գմբէթի վրայ, զանգերը հնչեցնում և սկսում են ծափ տալ ու պարել։